«Յունիբանկ» ԲԲԸ Վարչության 23.08.2024թ. որոշման համաձայն, բանկի ներքոնշյալ սակագները գործել են մինչև 16.09.2024թ.:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Տեղեկատվական ամփոփագիր<br>Ավանդ "Ճկուն"** | | | | | |
| **Ավանդի հիմնական պայմանները** | | | | | |
| **Ավանդի ներդրման արժույթը** | | | **ՀՀ դրամ** | **ԱՄՆ դոլար** | **Եվրո** |
| **Ավանդի ներդրման նվազագույն գումարը** | | | | | |
| Ֆիզիկական անձանց համար | | | 100,000 | 250 | 250 |
| Ա/Ձ կամ իրավաբանական անձանց համար | | | 1,000,000 | 2,500 | 2,500 |
| **Ավանդի ներդրման ժամկետը** | **Տոկոսների վճարման կարգը** | | **Տարեկան տոկոսադրույք** | | |
| 730 օր | Ամենամսյա | Քարտային հաշիվ /Բանկային հաշիվ | 9.5% | 3.5% | 2.0% |
| | | | **Տարեկան տոկոսային եկամտաբերություն** | | |
| | | | 9.92% | 3.56% | 2.02% |
| **Ավանդի առավելագույն գումարը*** | | | | | |
| Ֆիզիկական անձանց համար | | | 100,000,000 | 250,000 | 250,000 |
| Ա/Ձ կամ իրավաբանական անձանց համար | | | 200,000,000 | 500,000 | 500,000 |
| **Ավանդի գումարի ավելացում** | | | Թույլատրվում է կատարել առանց գումարային և քանակային սահմանափակման՝ ավանդի գործողության ողջ ընթացքում: | | |
| **Ավանդի գումարի նվազեցում** | | | • Ավանդի ներդրման օրվանից մինչև 90 օր ներառյալ ժամանակահատվածում ավանդի նվազեցում չի թույլատրվում,<br>• Ավանդի ներդրման 91-րդ օրվանից սկսած թույլատրվում է ավանդի գումարի մասնակի նվազեցում՝ առանց հաշվեգրված և/կամ վճարված տոկոսագումարների վերահաշվարկի: | | |
| **Ավանդի պայմանագրի խզում** | | | • Ավանդատուի պահանջով ավանդի ներդրման օրվանից մինչև 90-րդ օրը ներառյալ ժամանակահատվածում՝ ավանդային պայմանագրի վաղաժամկետ խզման դեպքում, իրականացվում է ավանդի ներդրման պահից մինչև ընդհատման նախորդ օրը հաշվարկված տոկոսագումարի | | |

<table>
<tr><td></td><td>վերահաշվարկ և վերադարձվող գումարի նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են տվյալ պահին Բանկում գործող ավանդի արժույթի ցպահանջ ավանդի տոկոսադրույքով,<br>• Ավանդի ներդրման 91-րդ օրվանից սկսած ավանդային պայմանագրի վաղաժամկետ խզման դեպքում հաշվեգրված և/կամ վճարված տոկոսագումարների վերահաշվարկ չի իրականացվում:</td></tr>
<tr><td colspan="2">* Յուրաքանչյուր արժույթով թույլատրվում է ներգրավել մինչև առավելագույն գումարի չափով ավանդ:Առավելագույն գումարը գերազանցող ավանդների համար տոկոսադրույքները սահմանվում են պայմանագրային հիմունքներով:</td></tr>
<tr><td colspan="2">Ժամկետային ավանդ, որը նախատեսված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձանց համար:</td></tr>
<tr><td colspan="2">Հաճախորդի ցանկությամբ տոկոսները կարող են ավելացվել (կապիտալացվել) ավանդի մնացորդին:</td></tr>
<tr><td colspan="2">Ավանդի արժույթի փոխարկում չի թույլատրվում:</td></tr>
<tr><td colspan="2">Բանկի Ավանդատուներին և/կամ Բանկի պարտատոմսերում ներդրում կատարողներին, անվճար տրամադրվում է հետևյալ տեսակի վճարային քարտեր և քարտի գործողության ողջ ժամանակահատվածում (3 տարի) տարեկան սպասարկման վճար չի գանձվում`<br>• 1,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի գումարի դեպքում` VISA Classic<br>• 10,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի գումարի դեպքում` VISA Gold<br>• 20,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի գումարի դեպքում` VISA Signature<br>• 50,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի գումարի դեպքում` VISA Infinite</td></tr>
</table>